

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտե

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԱՐԿՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻՆ ԿԱՊՎԱԾ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՀԵՏ

(ընդունված 2020 թվականի մարտի 25-ին)

I. Ներածություն

1. Ընդամենը մի քանի շաբաթվա ընթացքում կորոնավիրուսը (COVID-19) զգալի ազդեցություն ունեցավ առօրյա կյանքի վրա, մարդկանց ազատ տեղաշարժի և անձնական ազատությունների նկատմամբ կիրառված խիստ սահմանափակումները հնարավորություն ընձեռեցին իշխանություններին ավելի արդյունավետ պայքար մղել համավարակի դեմ՝ ձեռնարկելով հասարակության առողջության պահպանման անհետաձգելի միջոցներ:

2. Հատկապես խոցելի խումբ են կազմում ազատությունից զրկված անձինք՝ պայմանավորված արդեն իսկ նրանց նկատմամբ կիրառված սահմանափակումների բնույթով, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու նրանց սահմանափակ կարողությամբ: Քրեակատարողական հիմնարկներում և ազատությունից զրկման այլ վայրերում, որոնցից շատերը խիստ գերբնակեցված են և գտնվում են հակասանիտարական վիճակում, առաջանում են շատ ավելի սուր խնդիրներ:

3. Որոշ երկրներում ազատությունից զրկման վայրերում համավարակի դեմ պայքարի շրջանակներում ձեռնարկված միջոցառումներն արդեն հանգեցրել են անհանգստության թե՛ ազատությունից զրկման վայրերի ներսում, և թե՛ դրանց սահմաններից դուրս, ինչպես նաև կյանքից զրկվելու դեպքերի: Այս համատեքստում

կարևոր է, որպեսզի իշխանությունները համավարակի դեմ պայքարի միջոցներ ձեռնարկելիս ամբողջությամբ հաշվի առնեն ազատությունից զրկված անձանց և նրանց ընտանիքների, ինչպես նաև ազատությունից զրկման վայրի վարչակազմի և բժշկական անձնակազմի բոլոր իրավունքները:

4. Ձեռնարկված միջոցները, որոնք կօգնեն ազատությունից զրկված անձանց և ազատությունից զրկման վայրերի վարչակազմին սպառնացող ռիսկերի հաղթահարմանը, պետք է արտացոլեն սույն Առաջարկում ներկայացված մոտեցումները, և մասնավորապես, «մի վնասիր» և «խնամքի համարժեքություն» սկզբունքները: Կարևոր է նաև, որպեսզի ձեռնարկված միջոցների և դրանց պատճառերի վերաբերյալ ազատությունից զրկված անձանց, նրանց ընտանիքների և լրատվամիջոցների միջև ապահովվի թափանցիկ հաղորդակցություն:

5. Խոշտանգման, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքից շեղում չի թույլատրվում անգամ բացառիկ հանգամանքներում և արտակարգ իրավիճակի պայմաններում, որոնք սպառնալիք են բնակչության կյանքի համար:¹ Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի արդեն իսկ հրապարակած ուղենիշները հաստատում են, որ կարանտինի պաշտոնական վայրերը մտնում են Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի Կամընտիր արձանագրության (OPCAT) մանդատի մեջ:² Սրանից աներկբայորեն հետևում է, որ բոլոր այն վայրերը, որտեղից անձանց չի թույլատրվում հեռանալ նման պատճառներով, գտնվում են Կամընտիր արձանագրության մանդատի շրջանակներում և, հետևաբար, Կամընտիր արձանագրությամբ նախատեսված՝ Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի և Կանխարգելման ազգային մեխանիզմների վերահսկողության ներքո:

6. Մի շարք Կանխարգելման ազգային մեխանիզմներ խնդրել են Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի խորհուրդն այս իրավիճակին իրենց արձագանքի վերաբերյալ: Իհարկե, որպես ինքնավար մարմիններ, Կանխարգելման ազգային մեխանիզմներն ազատ են որոշելու, թե ինչպես իրենց իրավասությունների շրջանակում լավագույնս արձագանքեն համավարակի առաջադրած մարտահրավերներին: Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն պատրաստակամ է արձագանքել ուղենշային բնույթի ցանկացած

¹ Տե՛ս Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մաս, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 4-րդ և 7-րդ հոդվածներ:

² Տե՛ս Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությանն ուղղված առաջարկը՝ հարկադիր կարանտինի կապակցությամբ, ընդունված 40-րդ նստաշրջանում (2020 թվականի փետրվարի 10-ից 14-ը), հասանելի https://www.ohchr.org/Documents/HRBodies/OPCAT/NPM/2020.03.03-Advice_UK_NPM.pdf կայքէջում:

հատուկ հարցման: Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն տեղյակ է, որ մի շարք կարևոր հայտարարություններ արդեն իսկ արվել են տարբեր միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից, որոնք խրախուսում են անդամ պետությունների համագործակցությունը Կանխարգելման ազգային մեխանիզմների հետ:³⁴ Սույն Առաջարկի նպատակն է ուղեցույց հանդիսանալ Կամընտիր արձանագրության շրջանակներում ազատությունից զրկման վայրեր կանխարգելիչ այցեր իրականացնող մարմինների համար:

7. Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն ցանկանում է շեշտել, որ չնայած հանրության առողջության պահպանման համար ձեռնարկված միջոցառումներն իրենց բնույթով որոշակի ազդեցություն կունենան մշտադիտարկման այցերի վրա, այնուամենայնիվ այցերը չպետք է դադարեցվեն: Ընդհակառակը, հանրության առողջության պահպանման միջոցառումների հետևանքով կարող է աճել ազատությունից զրկված անձանց՝ վատ վերաբերմունքի ենթարկվելու ռիսկը: Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն գտնում է, որ Կանխարգելման ազգային մեխանիզմները պետք է շարունակեն իրականացնել կանխարգելիչ բնույթի մշտադիտարկման այցերը՝ հարգելով անհրաժեշտ սահմանափակումները և այցերի ընթացքում առաջնորդվելով դրանցով: Այս պահին հատկապես կարևոր է, որ Կանխարգելման ազգային մեխանիզմները երաշխավորեն ազատությունից զրկված անձանց՝ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արժանանալու ռիսկը նվազեցնելու համար արդյունավետ միջոցների ձեռնարկումը. այն արդյունք է այն իրական ճնշման, որին առերեսվում են ազատությունից զրկման համակարգերը և դրանց համար պատասխանատու անձինք:

II. Միջոցներ, որոնք իշխանությունները պետք է ձեռնարկեն ազատությունից զրկման բոլոր վայրերում, այդ թվում՝ ձերբակալված անձանց պահելու վայրերում,

³ Տե՛ս, օրինակ, «Բանտերում և ազատությունից զրկման այլ վայրերում COVID-19-ի նախապատրաստման, կանխարգելման և վերահսկողության վերաբերյալ 2020 թվականի մարտի 15-ի միջանկյալ ուղեցույցը» ընդունված Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից և «Կորոնավիրուսի (COVID-19) համավարակի համատեքստում ազատությունից զրկված անձանց բուժման սկզբունքների վերաբերյալ հայտարարությունը» ընդունված Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից 2020 թվականի մարտի 20-ին (CPT/Inf (2020)13 (19th March 2020)).

⁴ Տե՛ս CPT/Inf (2020)13 (ընդունված 2020 թվականի մարտի 19-ին), հասանելի [https://www.coe.int/en/web/cpt/-/covid-19-council-of-europe-anti-torture-committee-issues-statement-of-principles-relating-to-the-treatment-of-persons-deprived-of-their-liberty-](https://www.coe.int/en/web/cpt/-/covid-19-council-of-europe-anti-torture-committee-issues-statement-of-principles-relating-to-the-treatment-of-persons-deprived-of-their-liberty) կայքէջում:

Իմիգրացիոն կալանքի վայրերում, փախստականների փակ ճամբարներում, հոգեբուժական հիվանդանոցներում և այլ բժշկական հաստատություններում

8. Ակնհայտ է, որ պետությունը պետք է ապահովի ազատությունից զրկված անձանց, ինչպես նաև ազատությունից զրկման վայրերի աշխատակիցների և բժշկական անձնակազմի առողջությունը: Նելսոն Մանդելայի կանոնների համաձայն՝ «(...)Ազատությունից զրկված անձանց համար պետք ապահովվեն առողջապահական միևնույն չափանիշները, որոնք հասանելի են համայնքում, և նրանք պետք է հնարավորություն ունենան ստանալ անհրաժեշտ բժշկական ծառայություններն անվճար՝ առանց իրենց իրավական կարգավիճակով պայմանավորված խտրականության»:⁵

9. Հաշվի առնելով ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց միջև վարակի տարածման բարձր ռիսկը՝ Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն կոչ է անում բոլոր պետություններին.

1) իրականացնել անհետաձգելի գնահատում՝ բացահայտելու ազատությունից զրկված անձանց շրջանում ռիսկային գոտում գտնվողներին և հաշվի առնել բոլոր խոցելի խմբերին,

2) հնարավորության դեպքում՝ նվազեցնել քրեակատարողական հիմնարկներում և ազատությունից զրկման այլ վայրերում գտնվող անձանց թիվը՝ կիրառելով վաղաժամկետ, պայմանական կամ ժամանակավոր ազատում՝ հաշվի առնելով Տոկիոյի կանոններով սահմանված ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները,

3) առանձնահատուկ ուշադրություն դարձնել ազատությունից զրկման այն վայրերին, որտեղ կա գերբնակեցում կամ որտեղ պաշտոնական լրակազմը հիմնված է յուրաքանչյուր անձին հասանելի քառակուսի մետրերի հաշվարկի վրա և հնարավորություն չի տալիս ապահովել ընդհանուր բնակչության համար սահմանված սոցիալական հեռավորության չափանիշը,

4) վերանայել մինչդատական կալանքի վերաբերյալ բոլոր որոշումները՝ պարզելու համար դրանց կիրառման խիստ անհրաժեշտությունը հանրային առողջությամբ պայմանավորված արտակարգ իրավիճակի պայմաններում և բոլոր դեպքերում կիրառել գրավ՝ բացառությամբ առանձնապես ծանր գործերով դեպքերի,

⁵ Տե՛ս ՄԱԿ-ի 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» (Նելսոն Մանդելայի կանոններ) UN Doc A/RES/70/175, 24-րդ կանոն 1-ին մասը:

5) վերանայել իմիգրացիոն կալանքի և փախստականների փակ ճամբարում տեղավորելու կիրառումը՝ այս վայրերում բնակչության քանակը հնարավորինս նվազեցնելու նպատակով,

6) կալանքից ազատելը պետք է ենթարկվի վերահսկման այն անձանց համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, ում թեստավորման արդյունքը դրական է կամ ովքեր հատկապես խոցելի են վարակի նկատմամբ,

7) նվազեցնել գործող ռեժիմային սահմանափակումների կիրառումը, որը պետք է լինի առողջության ոլորտում հայտարարված արտակարգ իրավիճակի բնույթին համաչափ և օրենքին համապատասխան,

8) ապահովել բողոքարկման գործուն և արդյունավետ մեխանիզմների առկայությունը,

9) պահպանել ամենօրյա բացօրյա զբոսանքի նվազագույն պահանջները՝ միաժամանակ հաշվի առնելով համավարակի դեմ պայքարի համար անհրաժեշտ միջոցառումները,

10) ազատությունից զրկված անձանց տրամադրել (անվճար) պայմաններ և պարագաներ՝ ապահովելու անձնական հիգիենայի այն մակարդակը, որին պետք է հետևի բնակչությունը,

11) այն դեպքում, երբ այցելությունները սահմանափակված են առողջության պահպանման նպատակով, ազատությունից զրկված անձանց համար պետք է ապահովել բավարար այլընտրանքային միջոցներ՝ ընտանիքների և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու համար, օրինակ՝ հեռախոսազանգերի, համացանցի/էլեկտրոնային փոստի, տեսազանգերի և այլ համապատասխան էլեկտրոնային միջոցների շնորհիվ: Նման հաղորդակցությունը պետք է լինի պարզ և խրախուսելի, ինչպես նաև հաճախակի և անվճար,

12) ընտանիքի անդամներին կամ ազգականներին հնարավորություն տալ ազատությունից զրկված անձանց սնունդ և այլ պարագաներ փոխանցել՝ համաձայն գործող պրակտիկայի, ինչպես նաև անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների հաշվառմամբ,

13) վերստին իրականացնել ռիսկային խմբում գտնվող անձանց տեղաբաշխում՝ միևնույն ժամանակ ապահովելով ազատությունից զրկման վայրում նրանց իրավունքների ամբողջական իրականացումը,

14) կանխել բժշկական մեկուսացման կիրառումը կարգապահական մեկուսացման ձևով. բժշկական մեկուսացումը պետք է կիրառվի անկախ

բժշկական գնահատման հիման վրա, համաչափ, սահմանափակ ժամկետով և ընթացակարգային երաշխիքներով,

15) հնարավորության դեպքում՝ բուժօգնության կարիք ունեցող անձանց բուժօգնություն ցուցաբերել ազատությունից զրկման վայրից դուրս,

16) ապահովել վատ վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիքների կիրառումը (ներառյալ՝ անկախ բժշկական խորհրդատվության մատչելիության, փաստաբանի և ազատությունից զրկելու մասին երրորդ անձի տեղեկացնելու իրավունքները), դրանց մատչելիությունն ու կիրառությունը, չնայած հասանելիության սահմանափակումներին,

17) ապահովել ազատությունից զրկված անձանց և այդ վայրերի աշխատակիցների՝ ձեռնարկված բոլոր միջոցների, դրանց տևողության և կիրառման պատճառների վերաբերյալ հավաստի, ճշգրիտ և թարմացված տեղեկություն ստանալը,

18) ապահովել ազատությունից զրկված անձանց և բժշկական անձնակազմի առողջությունը պահպանելուն ուղղված համապատասխան միջոցների ձեռնարկումը. նրանք պետք է իրենց պարտականություններն իրականացնելիս լինեն պատշաճ կերպով ապահովված և պաշտպանված,

19) ազատությունից զրկված բոլոր անձանց և այդ վայրերի անձնակազմերին տրամադրել համապատասխան հոգեբանական աջակցություն, ում վրա ազդել են կիրառված միջոցները, և

20) հնարավորության դեպքում, վերը նշված բոլոր նկատառումները հաշվի առնել հոգեբուժական հիվանդանոցներում ոչ հոժարական գտնվող պացիենտների դեպքում:

III. Միջոցներ, որոնք իշխանությունները պետք է ձեռնարկեն այն անձանց նկատմամբ, ովքեր գտնվում են կարանտինում

10. Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն կարանտինում գտնվող անձանց վերաբերյալ արդեն արտահայտել է իր կարծիքը նախորդ առաջարկությունում:⁶ Սույնով հավելվում է հետևյալը.

1) կարանտինում գտնվող անձանց պետք է վերաբերվել որպես ազատ անձ՝ բացառությամբ կարանտինի նպատակով նրանց նկատմամբ կիրառված

⁶ Տե՛ս վերևում՝ 2-րդ հղում:

անհրաժեշտ սահմանափակումների՝ օրենքի և գիտական ապացույցների հիման վրա,

2) նրանք չպետք է դիտարկվել կամ վերաբերվել որպես ազատությունից զրկված անձ,

3) կարանտինային վայրերը պետք է լինեն բավարար չափի և ունենան բավարար պայմաններ, որոնք թույլ կտան ապահովել հաստատության ներսում տեղաշարժի ազատությունը և նպատակային տարաբնույթ գործողությունների իրականացումը,

4) պետք է խրախուսվի համապատասխան միջոցներով ընտանիքների և ընկերների հետ հաղորդակցությունը և այս հարցում ցուցաբերվի աջակցություն,

5) քանի որ կարանտինային վայրերն ազատությունից փաստացի (դե ֆակտո) զրկման ձև են, այնտեղ գտնվող անձինք պետք է կարողանան օգտվել վատ վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիքներից, ներառյալ՝ կարանտինային վայր տեղավորվելու պատճառների մասին տեղեկացվելու, անկախ բժշկական խորհրդատվության մատչելիության, փաստաբանի և կարանտինում գտնվելու մասին երրորդ անձին տեղեկացնելու իրավունքներից՝ իրենց կարգավիճակին և դրությանը համապատասխան,

6) պետք է ձեռնարկվել համապատասխան միջոցներ, որպեսզի տվյալ պահին կարանտինում գտնվողները կամ նախկինում կարանտինում գտնված անձինք, այդ թվում՝ համայնք վերադարձածները չթիրախավորվեն կամ չենթարկվեն խտրականության, և

7) կարանտինում գտնվելու ժամանակահատվածում և դրանից հետո պետք է ապահովվել համապատասխան հոգեբանական աջակցություն նրանց, ովքեր ունեն դրա կարիքը:

IV. Կանխարգելման ազգային մեխանիզմների կողմից ձեռնարկվելիք միջոցները.

11. Կորոնավիրուսի համավարակի ընթացքում Կանխարգելման ազգային մեխանիզմները պետք է շարունակեն իրականացնել մշտադիտարկման այցեր՝ իհարկե, հաշվի առնելով սոցիալական շփման սահմանափակումները: Կանխարգելման ազգային մեխանիզմների մուտքն ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ կարանտինային վայրեր, չի կարող արգելվել, նույնիսկ եթե ժամանակավոր սահմանափակումները համապատասխանում են Կամընտիր արձանագրության 14-րդ հոդվածի 2-րդ մասին:

12. Կամ ընտիր արձանագրության նպատակը, ինչպես նշված է դրա առաջին հոդվածում, կանոնավոր «մշտադիտարկման այցերի համակարգ ստեղծելն» է, որի Նախարանի համաձայն՝ դա «ազատությունից զրկված անձանց պաշտպանությունն է խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից»: Սա միջազգային իրավունքով նախատեսված պետության անվերապահ պարտավորությունն է: Այս համատեքստում անհրաժեշտ է, որպեսզի Կանխարգելման ազգային մեխանիզմներն ազատությունից զրկման վայրերում իրենց մանդատն իրականացնելիս մշակեն համապատասխան մեթոդներ, որոնք նվազագույնի կհասցնեն սոցիալական շփման անհրաժեշտությունը, բայց և այնպես կընձեռեն կանխարգելիչ գործունեություն իրականացնելու արդյունավետ հնարավորություն:

13. Նման միջոցառումները կարող են ներառել.

- 1) վերոշարադրյալ II և III գլուխներում նշված միջոցառումների ընդունման և իրականացման վերաբերյալ քննարկումներ համապատասխան պետական մարմինների հետ,
- 2) ազատությունից զրկման վայրերի հետ կապված անհատական և կոլեկտիվ տվյալների հավաքագրման ու ուսումնասիրության ավելացում,
- 3) ազատությունից զրկված անձանց հետ էլեկտրոնային միջոցներով հաղորդակցում,
- 4) ազատությունից զրկման վայրերում Կանխարգելման ազգային մեխանիզմի «թեժ գծի» վերաբերյալ համապատասխան իրազեկման աշխատանքների իրականացում, ինչպես նաև էլեկտրոնային փոստի և փոստային ծառայությունների հասանելիության ապահովում,
- 5) նոր/ժամանակավոր ազատությունից զրկման վայրերի ստեղծման նկատմամբ հսկողության իրականացում,
- 6) ազատությունից զրկման վայրերում Կանխարգելման ազգային մեխանիզմների աշխատանքին վերաբերող տեղեկատվության անհապաղ և գաղտնի փոխանցման ապահովում,
- 7) ազատությունից զրկման վայրերում տիրող իրավիճակի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների ստացում երրորդ անձանցից (օրինակ՝ ազատությունից զրկված անձանց ընտանիքի անդամներից և փաստաբաններից), և

8) ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և հումանիտար օգնություն ցուցաբերող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում:

V. Եզրահանգում

14. Հնարավոր չէ ճշգրիտ կանխատեսել, թե որքան կտևի համավարակը, կամ ինչպիսին կլինեն դրա հետևանքները: Պարզ է, որ այն արդեն իսկ խոր ազդեցություն է թողել հասարակության բոլոր անդամների վրա, և դեռևս կշարունակվի որոշակի ժամանակի ընթացքում: Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն և Կանխարգելման ազգային մեխանիզմներն իրենց գործունեությունն իրականացնելիս պետք է ղեկավարվեն «մի վնասիր» սկզբունքով: Սա նշանակում է, որ Կանխարգելման ազգային մեխանիզմները պետք է հարմարեցնեն իրենց աշխատանքային մեթոդները ստեղծված համավարակային իրավիճակին՝ հասարակությանը, ազատությունից զրկման վայրերի վարչակազմերին և ազատությունից զրկված անձանց պաշտպանելու, ինչպես նաև անձամբ պաշտպանվելու համար: Այս գործում հիմնական չափանիշը պետք է լինի ազատությունից զրկված անձանց վատ վերաբերմունքի կանխարգելման արդյունավետությունը: Պետությունների կողմից ձեռնարկվող արտակարգ միջոցառումներով պայմանավորված՝ ընդլայնվել են կանխարգելիչ գործունեության շրջանակները: Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի և Կանխարգելման ազգային մեխանիզմների պարտականությունն է նորովի արձագանքել այն նոր մարտահրավերներին, որոնց վերջիններս բախվում են Կամընտիր արձանագրությամբ իրենց մանդատի իրականացման շրջանակներում: